ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԲԱԳՐԱՏՅԱՆ ԲԱԳՐԱՏ ՍԵՐԳԵՅԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ. ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2026

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

БАГРАТЯН БАГРАТ СЕРГЕЕВИЧ

КОНЦЕПТУАЛЬНОЕ ОБЕСПЕЧЕНИЕ ПОЛИТИКИ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ: ПРОБЛЕМЫ И ВОЗМОЖНОСТИ РАЗВИТИЯ

Диссертация на соискание научной степени кандидата политических наук по специальности 23.00.02 “Политические институты и процессы”

АВТОРЕФЕРАТ

ЕРЕВАН - 2026

Ատենախոսության թեման հաստատվել է **ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում:**

Գիտական ղեկավար՝
քաղաքական գիտ. դոկտոր, պրոֆեսոր **Քոչարյան Տիգրան Տոնիկի**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝
քաղաքական գիտ. դոկտոր, պրոֆեսոր **Քեռյան Գարիկ Միշայի**
քաղաքական գիտ. թեկնածու, ասիստենտ **Թորոսյան Հայկ Յուրիկի**

առաջատար կազմակերպություն՝ **Հայ-ռուսական համալսարան**

Պաշտպանությունը կայանալու է 2026 թվականի փետրվարի 19-ին՝ ժամը 14:00-ին, Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ-ի «Քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ» 056 մասնագիտական խորհրդում:
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1:
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 2026 թվականի հունվարի 9-ին:

ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ-ի 056 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, քաղաքական
գիտությունների թեկնածու, դոցենտ **Սարգսյան Առնակ Գեորգիի**

Тема диссертации утверждена в **Институте философии, социологии и права Национальной Академии Наук Республики Армения.**

Научный руководитель:
доктор политических наук, профессор **Кочарян Тигран Тоникович**

Официальные оппоненты:
доктор политических наук, профессор **Керян Гарик Мишаевич**
кандидат политических наук, ассистент **Торосян Айк Юрикович**

Ведущая организация: **Российско-Армянский университет**

Защита состоится 19-ого февраля 2026 г. в 14:00 часов на действующем в ЕГУ специализированном совете 056 "Политология и международные отношения" МОНКС КВОН РА. Адрес: РА, г. Ереван, 0025, Ал. Манукяна, 1.
С диссертацией можно ознакомиться в библиотеке имени Саркиса и Мари Измирлянов ЕГУ.
Автореферат разослан 9 января 2026 г.

Научный секретарь
специализированного совета 056 МОНКС КВОН РА,
кандидат политических наук, доцент **Саргсян Арнак Георгиевич**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Հայաստանի Հանրապետության անվտանգային միջավայրը վերջին տարիներին էական փոփոխությունների է ենթարկվել, որը բացասաբար է ազդում ազգային անվտանգային քաղաքականության վրա: Հայաստանի Հանրապետության անվտանգային քաղաքականության գնահատման համար միանշանակ անհրաժեշտ է հաշվի առնել գլոբալ և տարածաշրջանային անվտանգության արդի կերպափոխումները, ինչպես նաև պետության ներքին անվտանգային խնդիրներն ու դրանց պատճառ-հետևանքային գնահատումները:

Գլոբալ անվտանգության արդիական վերափոխումների վրա էական ազդեցություն է թողնում լիբերալ-դեմոկրատական արևմտյան ճակատում դրսևորվող քաղաքական ճգնաժամը: Դոնալդ Թրամփի նախագահության հաստատումը ԱՄՆ-ում և ԵՄ-ում պահպանողական աջ և լիբերալ ձախ քաղաքական ուժերի միջև ընթացող լարվածության աճը թուլացնում է միջազգային հարաբերություններում հավաքական Արևմուտքի դերակատարությունը: Դոնալդ Թրամփի նախագահության ընթացքում ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը ենթարկվում է զգալի փոփոխությունների՝ ստանալով ավելի մեկուսացված և միակողմանի բնույթ: ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության գերակա նպատակն այլևս ոչ թե ազատության, ժողովրդավարական արժեքների կամ կանոնների վրա հիմնված միջազգային կարգի պահպանումն է, այլ ԱՄՆ-ի գլոբալ պատասխանատվության նվազեցումը: Այդ համատեքստում ԱՄՆ-ի և ԵՄ-ի միջև նվազում են անդրատլանտյան հարաբերությունների հետագա ինտեգրման հեռանկարները, ինչը նաև ազդում է ԱՄՆ-ի կողմից ՌԴ-ին քաղաքականապես զսպելու գործընթացների թուլացման վրա:

Չնայած ուկրաինական հակամարտության կարգավորման ուղղությամբ ընթացող ԱՄՆ-ՌԴ բանակցություններին, Ռուսաստանի և Ուկրաինայի միջև խաղաղության համար անհրաժեշտ նախադրյալները դեռևս բացակայում են, ինչը պայմանավորված է նաև Արևմտյան դաշնակիցների միջև կարգավորման տեսլականի վերաբերյալ հակադիր դիրքորոշումներով: Մեծապես հավանական է, որ ԱՄՆ-ՌԴ հարաբերությունների կարգավորման հնարավորության դեպքում եվրոպական պետությունները և Ռուսաստանի Դաշնությունը շարունակեն ակտիվ սպառազինման, երկարատև պաշտպանական ու տնտեսական մրցակցության խորացման քաղաքականությունը:

Հաշվի առնելով վերջին տարիներին գլոբալ զարգացումներն ու փոփոխությունները՝ առաջիկայում համաշխարհային ռազմավարական մրցակցության հիմքում լինելու է գիտատեխնոլոգիական գերազանցության և նորարարության շուրջ ծավալվող մրցակցությունը կամ տեխնոլոգիական

սպառազինությունների մրցավազքը[1]: Ներկայումս ձևավորվող բազմակենտրոն աշխարհակարգը ներկայացվում է որպես անհավասարակշված համակարգ, որտեղ նվազում է զսպման դասական մեխանիզմների դերը: Նոր աշխարհակարգի ձևավորման պայմաններում պետության անվտանգության քաղաքականության չափանիշները որոշակիորեն փոփոխության են ենթարկվում:

2020 – 2025 թթ. զարգացումների համատեքստում Հարավային Կովկասում էականորեն ակտիվացել է գլոբալ և տարածաշրջանային ռազմավարական մրցակցությունը, ինչը հանգեցնում է անվտանգային նոր բազմաշերտ մարտահրավերների ու սպառնալիքների առաջացմանը: Հարավային Կովկասում մեծանում է վտանգը, որ այն կարող է ռազմավարական մրցակցության գոտուց վերածվել ռազմավարական առճակատման գոտու, ինչը կարող է բացասաբար ազդել տարածաշրջանի անվտանգության և կայունության վրա:

ՀՀ անվտանգային քաղաքականության ու կարողությունների զարգացման, սպառնալիքների չեզոքացման արդյունավետությունը պայմանավորված է դրանց վերաբերյալ կանխատեսումների արդյունավետությամբ, պատեհաժամ բացահայտմամբ և դասակարգմամբ: Ազգային անվտանգության ապահովման համար անհրաժեշտ ուժերի, միջոցների և ռեսուրսների արդյունավետ օգտագործումը կախված է նաև արտաքին անվտանգության ռիսկերի և սպառնալիքների համապատասխան գնահատումից: Անվտանգային նման հնարավոր սպառնալիքների բացահայտումը և արդյունավետ չեզոքացումը հնարավոր են բացառապես գլոբալ ու տարածաշրջանային անվտանգային միջավայրի վերոնշյալ և բազմաթիվ այլ գնահատումների հաշվառմամբ:

Որպես անվտանգության քաղաքականության արդիականացման հիմնական նպատակ կարելի է սահմանել այն հիմնական ուղենիշները, երկարատև պլանավորման խնդիրներն ու ռեսուրսները, որոնք հիմք են հանդիսանալու ՀՀ ազգային անվտանգության բնագավառի և մասնավորապես երկրի հնարավորությունների կառուցվածքային ու բովանդակային վերափոխման ու կիրառման, կառավարման համակարգերի զարգացման, գիտատեխնիկական ներուժի արդյունավետ կիրառման և այդ ամենով հանդերձ՝ ամուր ու հուսալի անվտանգության համակարգի և քաղաքականության ապահովման համար: Վերոնշյալ հիմնախնդիրների գիտահետազոտական ու տեսագործնական համապարփակ ուսումնասիրությամբ էլ պայմանավորված են թեկնածուական ատենախոսության թեմայի ընտրությունն ու արդիականությունը:

Ատենախոսության թեմայի մշակվածության աստիճանը:

Անվտանգության ապահովումն ի սկզբանե հանդիսացել է մարդկանց՝ հասարակության մեջ միավորվելու գլխավոր շարժառիթներից, որի

[1] Տե՛ս Military Spendind and Global Security, Humanitarian and Environmental Perspectives, Ed. by **Rufanges Jordi Calvo,** , University of York, UK, 2024, p. 10.

ինտենսիվությունն ու մասշտաբները անընդհատ աճման միտումներ են դրսևորել: Անվտանգության ապահովումը, քաղաքակրթության ստեղծմանը զուգընթաց, գնահատելի էր առանձին անհատների, իսկ հետագայում՝ նաև ամբողջ հասարակության ու պետության գլխավոր նպատակներից:

Այսօր էլ պետության համար անվտանգության ապահովման կարևորությունը չի նվազել: Այն առաջնային խնդիր է ազգի, հասարակության և պետության գոյատևման ու զարգացման համար: Անվտանգության և դրա ապահովմանն ուղղված խնդիրների ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի բոլոր ազգերի և պետությունների համար՝ անկախ նրանց չափերից կամ զարգացվածության աստիճանից:

Մասնագիտական աղբյուրների գնահատման համատեքստում հարկ է փաստել, որ տարբեր մասնագետներ տարբեր սահմանումներով են բնորոշում ազգային անվտանգության ինստիտուտը: Այս բոլոր սահմանումները կրում են քաղաքական - փիլիսոփայական, քաղաքական-տնտեսական և իրավական բնույթներ: Խնդիրն այն է, որ անվտանգության հիմնախնդիրը միաժամանակ և՛ տեսական խոշոր նշանակություն ունեցող հիմնախնդիր է, և՛ անմիջականորեն առնչվում է երկրի քաղաքական կյանքի, պետության կառավարման և ամենօրյա գործառնության հետ՝ հանդիսանալով բարդ համալիր ու բազմամակարդակ երևույթ[2]:

Այս պարագայում հատուկ նշանակություն է ստանում այնպիսի զարգացող օբյեկտների ճանաչողությունը, ինչպիսիք են մարդը (անձը), հասարակությունը, պետությունը, ինչպես նաև իրականում գոյության երկու կարևոր գործառույթները՝ մարդկանց ինքնապահպանության և զարգացման էությունն ու փոխկապակցվածությունը: Այլ կերպ ասած՝ մարդկային յուրաքանչյուր գործունեություն «աննպատակ» է դառնում անվտանգության ապահովման բացակայության պայմաններում: Հետևապես, ազգային անվտանգության հիմնախնդիրների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս անձ-հասարակություն-պետություն եռամիասնությունը դիտարկելու որպես անբաժանելի ու փոխպայմանավորող համակարգ[3]:

---

[2] **Սաֆարյան Ս.,** Ազգային անվտանգություն. հասկացությունը, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները, Նորավանք ԳԿՀ, Եր., 2003, **Քոչարյան Տ.Տ.,** ՀՀ ռազմական անվտանգության ապահովումը ազգային անվտանգության համատեքստում, Եր.: ԵՊՀ հրատ., 2012, **David W. Clinton,** National Interest: Rhetoric, Leadership and Policy. Boston: University Press of Americ, 1988, **Williams P.,** Security Studies: An Introduction, 2013 և այլն:

[3] **Թադևոսյան Ս.,** ՀՀ ազգային անվտանգության ապահովմանն անհրաժեշտ ինստիտուցիոնալ համակարգի ձևավորման խնդիրների շուրջ // 21-րդ դար տեղեկատվական-վերլուծական հանդես, 2008, N 2, **Filimon Luiza-Maria,** An Overview of the Copenhagen School's Approach to Security Studies: Constructing (In)Security Through Performative Power // The Romanian Journal for Baltic and Nordic Studies, Bucureşti, 2016, Vol. 8, Issue 2, 2016, **Joseph S. Nye Jr.,** Soft Power: The Means to Success in World Politics, New York, 2004 և այլն:

Միևնույն ժամանակ, ներկայիս պայմաններում ազգային անվտանգության ապահովման մակարդակը մեծապես կախված է աշխարհաքաղաքական և մարդկային զարգացվածության մակարդակից, քանի որ անվտանգությունն ապահովվում է բազմաշերտ կարողությունների հավաքական հզորությամբ: Այս դրույթը, սակայն, չի նշանակում, որ տվյալ կապը գծային է և դետերմինացված: Այսինքն՝ պետության զարգացվածության մակարդակը դեռևս չի երաշխավորում անվտանգության քաղաքականության բարձր մակարդակ: Ավելին, պետության զարգացման և անվտանգության ապահովման խնդիրներն, ըստ էության, ունեն հակադարձ ուղղվածություն. եթե առաջինը պահանջում է մշտական նորարարություններ, փոփոխություններ և այլն, ապա երկրորդը՝ հաստատուն վիճակ, ամեն տեսակ նորարարությունների (հատկապես՝ ռիսկային տարր պարունակող) սահմանափակում: Իհարկե, այս երկու գործընթացների միջև առկա է ավելի բարդ դիալեկտիկական կապ՝ հանդիսանալով նույն մեդալի երկու կողմեր[4]:

Ե՛վ հին աշխարհում, և՛ միջին դարերում, և՛ հատկապես նոր ու նորագույն ժամանակաշրջանում անվտանգության խնդիրը դիտարկվել է որպես կարևորագույն նպատակ և համակողմանիորեն ուսումնասիրվել է: Քաղաքական մտքի պատմության շրջանակներում պետության ներքին անվտանգության և արտաքին անվտանգության ապահովության մեխանիզմների վերաբերյալ մշակվել են մի շարք տեսություններ: Ներքին անվտանգության խնդիրները քննարկվել են հատկապես իրավաքաղաքական գործընթացներին, կառավարման մոդելներին վերաբերող աշխատություններում՝ անձանց և հասարակության հադեպ վերահսկողության համատեքստում: Արտաքին անվտանգության խնդիրները հիմնականում մշակվում էին արտաքին քաղաքականության տեսության և անվտանգային ռազմավարության շրջանակներում: Գլոբալ ու տարածաշրջանային զարգացումների գնահատումներում ազգային անվտանգության տեսությունը հիմնականում զարգացավ ամերիկյան մասնագետների աշխատանքների շնորհիվ[5]:

Հայրենական մասնագիտական գրականության աղբյուրների վերլուծությամբ ընդգծվում է այն գաղափարը, որ ազգային անվտանգությունը,

---

[4] Конституционно-правовой статус Совета Безопасности РФ, Под общ. ред. д.ю.н. **Н.П. Патрушева,** М., 2009, **Freedman L.,** Strategy: A History. N.Y., Oxford University Press, 2013, **Joseph S. Nye,** Get Smart: Combining Hard and Soft Power, Center for Strategic and International Studies, July/August 2009 և այլն:

[5] **Պետրոսյան Գ.,** Պատժամիջոցները ժամանակակից միջազգային հարաբերություններում, ԵՊՀ հրատ., Ե., 2025, **Минасян С.,** Внешняя политика постсоветской Армении: 20 лет одновременно на нескольких стульях // Мировая экономика и международные отношения. 2013. № 1, **Noemi Maria Rocca,** Regional Stability for National Survival: Iran's Foreign Policy Towards the Southern Caucasus and Central Asia in the Post-Soviet Era // International Relations and Diplomacy, September 2017, Vol. 5, No. 9, University of Coimbra, Coimbra, Portugal, **Rumer E., Richard S.and Stronski P.,** U.S. POLICY TOWARD THE SOUTH CAUCASUS. Take Three, 2017 և այլն:

լինելով բարդ և համալիր երևույթ, ունի բազմաթիվ բաղկացուցիչներ: Ազգային անվտանգության բաղկացուցիչների առանձնացումն անհրաժեշտ է դիտարկել անձ-հասարակություն-պետություն-միջազգային հանրություն քառամիասնական մեխանիզմի հիման վրա, չնայած, մինչև այժմ առանձնացնում են անձ-հասարակություն-պետություն եռամիասնական համակարգը: Նշված հիմնահարցերի մասով ազգային անվտանգության կոնցեպցիային մի շարք մասնագետներ անդրադարձել են ռազմավարության, պետական կառավարման և իրավական ապահովման ու միջազգային քաղաքականության տեսության լույսի ներքո[6]:

Նշված աշխատություններում և այլ աղբյուրներում ներկայացվում են ատենախոսության թեմայի ընդհանուր մեթոդոլոգիական ու մի շարք կոնկրետ ասպեկտներ, որոնց արժեքայնությունը, անկասկած, շատ մեծ է: Սույն ատենախոսության մեջ, սակայն, համակարգված ուսումնասիրվում են ՀՀ ազգային անվտանգության քաղաքականության և դրա ապահովման հիմնախնդիրները, իսկ վերոնշյալ աղբյուրների ամբողջական համադրման արդյունքում հնարավոր դարձավ համապարփակ վերլուծության ենթարկել երկրի ազգային անվտանգության տարբեր բաղադրիչներին վերաբերող հիմնահարցերը, գիտականորեն հիմնավորված եզրահանգումներ կատարել ու նաև որոշ առաջարկներ ներկայացնել:

Հետազոտության օբյեկտը: Գլոբալ և տարածաշրջանային արդի գործընթացների հաշվառմամբ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության քաղաքականության հիմնախնդիրները, դրանց ապահովման համակարգում դիտարկվող քաղաքական-իրավական հայեցակարգային հարցերի վերհանումը և կառուցակարգերի կատարելագործման գիտագործնական հիմնավորումները:

Ատենախոսության առարկան: Ազգային անվտանգության քաղաքականությանը և դրա ապահովման գործընթացին առնչվող քաղաքական-իրավական հիմնախնդիրները, ազգային անվտանգության ապահովման ներպետական կառուցակարգերը՝ հիմնավորելով խորհրդարանական հանրապետության մոդելում նոր բարեփոխումների ծրագրերն ու հնարավոր հեռանկարները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության արտաքին անվտանգության քաղաքականության հիմնական ուղղությունները:

Հետազոտության նպատակը և խնդիրները:

Հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ինստիտուցիոնալ էությունը, բացահայտել անվտանգային քաղաքականության մշակման ու իրագործման

---

[6] **Նազարյան Ա.Ս.**, ՀՀ պաշտպանական ոլորտի օրենսդրական բարեփոխումների հիմնական ուղղությունները բանակաշինության արդի փուլում, «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2008, հմ. 2-3; **Chen Friedberg, Reuven Hazan,** Legislative Oversight of the Executive Branch in Israel: Current Status and Proposed Reform, Jerusalem, 2009 և այլն:

առանձնահատկությունները, ազգային շահերի հստակեցման ու արժեքաբանական գնահատման, դրանց ռազմավարական երաշխավորման մոտեցումները, ինչպես նաև Հարավային Կովկասի տարածաշրջանում և դրանից դուրս գլոբալ աշխարհաքաղաքական ու միջազգային անվտանգության տիրույթներում ՀՀ արտաքին անվտանգային քաղաքականության բազմաչափությունը:

Այս նպատակի իրականացման համար առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

- ուսումնասիրել ազգային անվտանգության ինստիտուտի հասկացության ու էության առանձնահատկությունները,
- հետազոտել Հայաստանի Հանրապետության անվտանգության համակարգի ձևավորման և կայացման իրավաքաղաքական ապահովման զարգացումները,
- վերլուծել ազգային անվտանգության ռազմավարության և հայեցակարգային մյուս կարգավորումների դերն ու նշանակությունը,
- գիտահետազոտական հիմքով գնահատել անվտանգային քաղաքականության կիրարկման առանձնահատկությունները և դրսևորումները արդի գործընթացներում,
- բացահայտել Հայաստանի Հանրապետության ազգային շահերի սահմանման հիմնախնդիրը անվտանգային ռազմավարական փաստաթղթերում,
- առանձնացված դիտարկել ազգային անվտանգության քաղաքականության տարանջատումը ներքին ու արտաքին ուղղվածությամբ՝ գնահատելով նաև 2020 - 2025 թվականների իրադարձություններն ու զարգացումները,
- հետազոտել տարածաշրջանային զարգացման և գլոբալացման գործընթացների դերակատարների գործելակերպի փոփոխությունները, այդ գործընթացներով պայմանավորված Հայաստանի Հանրապետության արտաքին անվտանգության հայեցակարգային առաջնահերթությունները:

Ատենախոսության տեսամեթոդական հիմքը:

Աշխատանքի տեսական աղբյուրները վերաբերում են անվտանգության ոլորտի բարեփոխումներին առնչվող հիմնահարցերի և քաղաքական գործընթացներում դրանց առանձնացման վերլուծություններին: Ատենախոսության տեսական հիմքը կառուցված է Հայաստանի Հանրապետության անվտանգության քաղաքականության հիմնահարցերին վերաբերող գիտահետազոտական աշխատությունների և քաղաքական ղեկավարության կողմից արտահայտված պաշտոնական դիրքորոշումների ու գնահատականների վերլուծության վրա:

Քանի որ ատենախոսությունը որոշակիորեն ունի նաև միջառարկայական բնույթ, ապա այս տեսանկյունից ատենախոսության համար հիմք են ծառայել նաև երկրի ներքին ու արտաքին անվտանգային միջավայրի, ոլորտում իրականացվող քաղաքական-իրավական գործընթացների և մի շարք այլ հարցերի վերաբերյալ քաղաքագետների, իրավագետների, սոցիոլոգների,

փիլիսոփաների և այլ գիտահետազոտական ուղղությունների տարբեր հրատարակումներ:

Հետազոտության ընթացքում օգտագործվել են գիտահետազոտական շրջանակներում հիմնավորված ու գործնականում լայն կիրառում ունեցող ընդհանուր բնույթի՝ դիալեկտիկական և համակարգային գիտահետազոտական մեթոդները, այնպես էլ մասնավոր, կոնկրետացվող նշանակության՝ իրավաքաղաքական վերլուծության, համեմատական, համակարգակառուցվածքային, պատմահիրավական, վիճակագրական գնահատման և մի շարք այլ մեթոդներ: Գիտական աշխատանքում համադրվել են մասնագիտական գրականության մեջ առկա տեսակետները, պաշտոնական գնահատականներն ու դիրքորոշումները, ուսումնասիրվել են նորմատիվ իրավական բազայի հիմնական կարգավորումները, համեմատվել են արտասահմանյան առաջավոր փորձ ունեցող երկրներում անվտանգության ոլորտի և դրա ապահովմանն ուղղված քաղաքականության զարգացման առանձնահատկությունները, նախանշվել են քաղաքականության հայեցակարգային բարեփոխումների հետագա գործընթացում այդ փորձի ներբեռնման հնարավորությունները:

Ատենախոսության գիտական նորույթը: Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության քաղաքականությունն առանձնահատուկ տեղ է գրավում պետահիշխանական բազմամակարդակ գործընթացներում, որն ստեղծվում է ազգային, հասարակական ու անհատի շահերի իրականացման նպատակներով՝ նկատառելով և հենվելով սոցիալական, տնտեսական, քաղաքական, ռազմական, տեխնածին ու այլ գործոնների վրա: Հաշվի առնելով, որ ազգային անվտանգության ապահովման ոլորտում իրար են միահյուսվում պետական կյանքի ու գործունեության փաստացի բոլոր գործառույթները՝ կարելի է ընդգծել, որ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության քաղաքականությունը վերջինիս զարգացման համակարգի առանցքային բաղադրիչն է, ՀՀ ազգային շահերի ապահովման պետական քաղաքականության իրականացման գլխավոր գործիքակազմը: Անվտանգության քաղաքականության հետազոտման կարևորությունը պայմանավորված է նաև նրանով, որ դրա ապահովման գործառույթն ինտենսիվ ազդում է կենսագործունեության տարբեր բնագավառների զարգացման ուղղվածության ձևավորման և հնարավորությունների կանխատեսման վրա, ինչը հատկապես ընդգծվում է Հարավկովկասյան տարածաշրջանում ազդեցություն ունեցող զարգացումների և այդ համատեքստում կայուն խաղաղության հաստատման գործընթացների համատեքստում:

Իրականացված հետազոտության արդյունքում առաջ են քաշվել գիտական նորույթ պարունակող հետևյալ դրույթները, որոնց շրջանակներում ատենախոսության վերջնամասում ներկայացվում են նաև մի քանի հիմնավորված առաջարկներ.

- մասնագիտական գրականության մեջ առկա սահմանումների ու մոտեցումների հիման վրա առաջ են քաշվել ազգային անվտանգության և ազգային անվտանգության քաղաքականության նորացված սահմանումներ,

- տարանջատվել են փափուկ և կոշտ անվտանգային քաղաքականությունների տեսագործնական առանձնահատկությունները[7], դրանց դրսևորումները Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության իրավաքաղաքական հայեցակարգային հիմքերում,

- փորձ է արվել բացահայտելու անվտանգության քաղաքականության մշակման ու իրագործման առանձնահատկությունները ՀՀ-ում սահմանադրական բարեփոխումների փուլային գնահատումների և սպասվող նոր զարգացումների հաշվառմամբ,

- ուսումնասիրվել և համադրվել են արտասահմանյան առաջավոր փորձի՝ Հայաստանի Հանրապետության անվտանգության համակարգում ներբերոնման հնարավորությունները, մասնավորապես՝ անվտանգության խորհրդի իրավաքաղաքական կարգավիճակի և գործառույթների զարգացման առաջարկներով,

- առանձնացված դիտարկվել են ազգային անվտանգության քաղաքականության զարգացման տեսլականում ազգային շահերի հստակեցմանն ուղղված գնահատումներ, կանխորոշվել շահերի նպատակային շրջանակներն ու կարևորության առաջնահերթությունները,

- տեսակիրառական վերլուծությամբ բացահայտվել են անվտանգության քաղաքականության շրջանակներում ընդհանուր և ոլորտային կառուցակարգերի ազդեցությունը և դրանց հայեցակարգային կատարելագործման հնարավորությունները, հիմնավորվել է աստիճանակարգային և հաջորդական փոխպայմանավորվածությամբ կանոնակարգումների անհրաժեշտությունը,

- կանխատեսվել են ազգային անվտանգության ներքին ու արտաքին ուղղվածությունների զարգացման տեսլականները, առաջարկվել են դրանց իրավաքաղաքական ապահովման (սահմանադրությունից մինչև ռազմավարական, ծրագրային ամրագրումներ) տեսակիրառական հնարավորությունները, ինչպես նաև, ըստ ուղղությունների, դրանց հստակեցման պահանջները:

Ատենախոսության գիտատեսական և կիրառական նշանակությունը: Հետազոտության շրջանակները բավականին լայն են, քանի որ ընդգրկում են ՀՀ

---

[7] Ատենախոսության շրջանակներում անվտանգային կոշտ և փափուկ քաղաքականությունների տարանջատումները դիտարկվում են համակարգի կառավարման ձևաչափում քաղաքական լիդերի (ուժի) ազատության, առաջնահերթությունների փոփոխություններ կատարելու հնարավորությունների և անվտանգային գործընթացների իրավանորմատիվային ամրագրումների համատեքստում: Այն ամբողջապես տարբերվում է անվտանգային տեսության մեջ փափուկ և կոշտ ազդեցության ուժերի հանրահայտ դիսկուրսից:

անվտանգության համակարգում հիմնարար դեր ու նշանակություն ունեցող քաղաքականության մշակման ու գործնականում իրականացման հիմնահարցերը, որոնց համեմատական վերլուծության հիման վրա առաջ են քաշվում հայեցակարգային բարեփոխումների և դիտարկվող հիմնախնդիրների ուսումնասիրության համապարփակ մոտեցումներ: Ատենախոսության տեսական կարևոր նշանակությունից է նաև անվտանգության համակարգի բարեփոխումների արդյունավետության գիտատեսական գնահատումը, նաև քաղաքականության համատեքստում ոլորտի զարգացման, ծրագրային հաջորդականության և առանձին ուղղությունների կանխատեսումն ու վերլուծումը:

Առաջարկվող գիտատեսական ամփոփումները և եզրահանգումները կարող են նաև մեթոդաբանական հիմք ծառայել ազգային անվտանգության բնագավառում քաղաքական-իրավական հիմնահարցերին վերաբերող նոր գիտական հետազոտությունների համար: Բացի այդ, գործնական նշանակության տեսանկյունից ատենախոսությունը կարող է նաև օգտակար լինել ՀՀ անվտանգության քաղաքականության կատարելագործման ու հայեցակարգային հիմքերի, ռազմավարական փաստաթղթերի լրամշակման համար:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Աշխատանքը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի կողմից: Ատենախոսության հիմնադրույթները հրապարակվել են գիտական հանդեսներում հրատարակված թվով 8 (ութ) հոդվածների միջոցով:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից՝ ութ ենթագլուխներով, եզրակացությունից, առաջարկներից և օգտագործված գրականության ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքի **ներածությունում** հիմնավորվում է թեմայի արդիականությունը, սահմանվում են հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակն ու խնդիրները, ներկայացվում են տեսամեթոդական հիմքը, գիտական նորույթը, տեսական և կիրառական նշանակությունը, ինչպես նաև աշխատանքի փորձարկման և կառուցվածքի մասին տեղեկություններ:

Ատենախոսության առաջին գլխում՝ «**Ազգային անվտանգության քաղաքականության և դրա իրականացման տեսական-մեթոդաբանական հիմնահարցերը**» վերնագրով, ատենախոսը համակողմանի հետազոտել է ազգային անվտանգության ինստիտուցիոնալ սահմանման ու գնահատման առանձնահատկությունները, ինչպես նաև փափուկ ու կոշտ քաղաքականությունների տարրերի դրսևորումները Հայաստանի Հանրապետության պաշտպանական-անվտանգային բարեփոխումներում: Այս գլխում համակողմանի վերլուծությամբ կարևորվում են ազգային շահերը Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության քաղաքականության համատեքստում:

Ատենախոսության երկրորդ գլխում, որը վերնագրված է՝ «**Ազգային անվտանգության քաղաքականության հենքային երաշխավորումը Հայաստանի Հանրապետությունում**», հեղինակի կողմից վերլուծվում են ազգային անվտանգության քաղաքականության հայեցակարգային ապահովումը Հայաստանի Հանրապետությունում 1991 – 2024 թթ. կտրվածքով, գնահատվում են Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության փաստաթղթավորման արդի հիմնախնդիրները: Առանձին ենթագլխով անդրադարձ է կատարվում է Հայաստանի Հանրապետության արտաքին անվտանգության քաղաքականության ռազմավարական տեսլականին:

Երրորդ՝ «**Ազգային անվտանգության քաղաքականության ռազմավարական երաշխավորման ներպետական համակարգը**» վերտառությամբ գլխում հեղինակը գիտավերլուծական մոտեցմամբ դիտարկում է Հայաստանի Հանրապետության օրինակով ազգային անվտանգության քաղաքականության ներպետական կառուցակարգերի համակողմանիությունն ու արդյունավետությունը, ինչպես նաև հետազոտվում և գնահատվում է անվտանգության խորհրդի դերը ազգային անվտանգության ապահովման գործում՝ համեմատական վերլուծություն կատարելով նաև արտասահմանյան մի շարք երկրներում այդ հաստատությունների իրավաքաղաքական կարգավիճակների շուրջ:

Եզրակացության մեջ ամփոփված են հետազոտության արդյունքում կատարված հետևյալ հիմնական եզրահանգումները՝

1. Քաղաքագիտական բազմաթիվ հետազոտական դպրոցների ու տեսությունների համատեքստում տարբեր բնորոշումներ են տրվում ազգային անվտանգության և ազգային անվտանգության քաղաքականության ինստիտուտներին: Այս բոլոր գնահատումները կրում են քաղաքական-փիլիսոփայական, քաղաքական-տնտեսական, քաղաքական-իրավական,

քաղաքական-սոցիալական և այլ փոխկապակցված բնույթ: Անվտանգության և դրա երաշխավորման հիմնախնդիրները միաժամանակ և՛ տեսական լայն նշանակություն ունեցող են, և՛ անմիջականորեն առնչվում են քաղաքական համակարգի, պետության ներքին ու արտաքին քաղաքականությունների, կառավարման համակարգի և պետաիշխանական գործառույթների հետ՝ այդպիսով գնահատվելով որպես բարդ, համալիր ու բազմամակարդակ երևույթ:

Հայաստանի Հանրապետության անվտանգային միջավայրի վերոնշյալ առանձնահատկություններից բխող սպառնալիքների բնույթը, ազգային անվտանգության երաշխավորվածության վրա ազդող քաղաքական, ռազմական, տնտեսական, սոցիալական, հասարակական, մշակութային և մյուս բոլոր գործոններն ու գործընթացները ձևավորում են ոչ միայն անվտանգության քաղաքականության խնդիրը՝ դրանց դիմագրավման և չեզոքացման առումով, այլև անմիջական ազդեցություն են գործում անվտանգային կարողությունների զարգացման միտումների ու հնարավորությունների վրա:

2. Ատենախոսության մեջ ներկայացված ինստիտուցիոնալ վերլուծության, անվտանգության համակարգային բնութագրիչների համընդգրկուն հաշվառմամբ կարելի է ներկայացնել ազգային անվտանգության և դրա երաշխավորման քաղաքականության հետևյալ համընդգրկուն բնորոշումները. ազգային անվտանգությունը ներքին և արտաքին սպառնալիքներից ու վտանգներից անձի, հասարակության և պետության կենսականորեն կարևոր շահերի պաշտպանվածության վիճակն է (երաշխավորելով բնականոն և կայուն զարգացում կենսագործունեության բոլոր ոլորտներում), որը գնահատվել և ռազմավարական ամրագրում է ստացել համապատասխան իրավաքաղաքական հենքային փաստաթղթերում՝ սահմանադրությունից մինչև որորտային հայեցակարգեր ու ծրագրեր:

3. Արդի՝ գլոբալ, տարածաշրջանային ու ազգային մակարդակներում անվտանգային գործընթացների գնահատումը պահանջում է երկու հիմնական մոտեցումների՝ կոշտ և փափուկ անվտանգության քաղաքականությունների համադասված արժևորումը: Կոշտ ուժը վերաբերում է ուժի և սպառնալիքների կիրառմանը՝ նպատակ ունենալով պարտադրելու կամ ենթարկեցնելու այլ պետությունների կամ խմբերի, իսկ դա սովորաբար իրականացվում է ռազմական ուժի կամ տնտեսական պատժամիջոցների պատճառով: Կոշտ ուժի կիրառումը միտված է արագ և ակնհայտ արդյունքներին, սակայն այն կարող է ունենալ բացասական ազդեցություն. մնում է կարճաժամկետ և, հաճախ, անտեսում է գործընկերների կամ միջազգային հանրության վախերը կամ անհամաձայնությունները: Փափուկ ուժի կիրառությունը ավելի երկարաժամկետ ռազմավարություն է, որի նպատակը երկրի արժեքների տարածումն ու վստահություն առաջացնելն է՝ առանց ստիպելու կամ ուժ գործադրելու: Սա հատկապես կարևոր է, երբ նպատակն է՝ ստանալ ազդեցություն առանց ռազմական ուժի կիրառման:

Բացի այդ՝ նշված քաղաքականությունները հաճախ չեն հակասում միմյանց, և ժամանակակից միջազգային հարաբերություններում ամբողջությամբ

ողջունելի է դրանց համատեղումը, որը մասնագետների կողմից կոչվում է նաև «խելացի ուժ»: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս պետություններին ճկուն արձագանքելու անվտանգության սպառնալիքներին՝ միաժամանակ համատեղելով դիվանագիտական ու ռազմական գործիքները և առավելագույնս օգտագործելու իրենց ազդեցությունը միջազգային ասպարեզում:

4. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության քաղաքականության համար ընդգծված կարևորություն ունի այս երկու տեսակի միջոցների և դրանց իրագործման գործիքակազմի համադրությունը՝ որպես խելացի ուժի տարբերակ: Եթե «կոշտ ուժի» գործիքները միջոցներ են տրամադրում ագրեսիան զսպելու, տարածքային ամբողջականությունը պաշտպանելու և անվտանգության սպառնալիքներին արձագանքելու համար, ապա «փափուկ ուժի» գործիքները նպաստում են տարածաշրջանային կայունությանը, անապահովության արմատական պատճառների վերացմանը, ինչպես նաև դիվանագիտական ջանքերի և մշակութային փոխանակման ծրագրերի միջոցով համագործակցությանը:

5. Որպես ՀՀ ազգային անվտանգության քաղաքականության «կոշտ ուժի» գործիքներ՝ առանձնացվում են զինված ուժերը, պաշտպանական դաշինքները, սահմանային ենթակառուցվածքների, հսկողության տեխնոլոգիաների ու սահմանապահ ուժի կիրառումը, իրավապահ մարմինների զարգացումը և դերի բարձրացումը, կիբերանվտանգությանն ուղղված միջոցառումները, սեփական ռազմարդյունաբերության զարգացումը և այլն: «Փափուկ ուժի» հիմնական գործիքներից են՝ դիվանագիտության և միջազգային հարաբերությունների գործուն կառուցակարգերը, հանրային դիվանագիտության ակտիվացումը, ներգրավվածությունը հակամարտությունների կարգավորման գործընթացին և միջնորդական ջանքերի իրականացումը, Սփյուռքի համադասված ներգրավվածությունը հայաստանյան գործընթացներին և այլն:

6. Ազգային անվտանգության քաղաքականության հիմնախնդրի համատեքստում ազգային շահի ընկալման տարբեր հայեցակարգերի առկայությունը պայմանավորված է նրանով, որ ազգային շահն այս համատեքստում դիտվում է որպես ազգի զարգացման առավելագույն նպաստավոր պայմանների համակարգ, հետևաբար՝ միանշանակ չի կարող ընկալվել և ընդունվել ազգաբնակչության բոլոր շերտերի կողմից: Արդի աշխարհաքաղաքական, տարածաշրջանային ու ներպետական մակարդակներում Հայաստանի Հանրապետության ռազմավարական խնդիրների գնահատման համար (ընդգծելով նրա առաջնահերթ նպատակները պայմանավորող անվտանգության և արտաքին քաղաքական հարթությունները) անհրաժեշտ է վերհանել ազգային շահի իրականացման հիմնական խնդիրները, ինչպես նաև ազգային շահի իրականացմանը սպառնացող վտանգները: Այս համատեքստում հարկ է նաև նշել, որ ճշմարիտ չէ այս կամ այն քաղաքական երևույթը միանշանակ դիտել որպես ազգային շահին սպառնացող վտանգ կամ նրա իրականացման հնարավորություն, քանի որ դա նեղացնում է ռազմավարական դիտարկման

միջակայքը՝ վտանգելով ոչ միայն ազգային շահի ձևակերպման, այլև իրացման հնարավորությունները:

7. Հայաստանի Հանրապետության անվտանգային ռազմավարական զարգացումների վերլուծությունը փաստում է այն իրողությունը, որ ազգային անվտանգության քաղաքականության ռազմավարական մակարդակի երաշխավորման ամրագրումներում (ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունում և հետագայում նաև ոլորտային անվտանգային հայեցակարգերում) ազգային շահերը խիստ սահմանափակ գնահատումներով են ներկայացվում, ինչի պարագայում ամբողջապես չի արտահայտվում դրանց ապահովման նպատակներն ու ծրագրային զարգացումները: Ռազմավական-հայեցակարգային ամրագրում է պահանջում այն, որ ժամանակակից աշխարհում Հայաստանի Հանրապետության ազգային շահերը իր քաղաքացիների, հայրենաբնակ հայության և հայկական համայնքների շահերի հավասարակշռված հանրագումարն է, որի ձևավորման միջոցով մրցակցային նոր միջավայրում լուծվում են գիտակցված պահանջմունքների վերածված ազգային նպատակների հետապնդման և արժեքների պաշտպանության խնդիրները:

8. ՀՀ անվտանգության ապահովման կառուցակարգը մշտապես և հետևողական կատարելագործվում է՝ հիմքում ունենալով դրա իրավաքաղաքական կայուն հենքի հաստատումն ու պահպանումը: ՀՀ ազգային անվտանգության ապահովման համար առաջնային նշանակություն ունի արդյունավետորեն գործող, որակապես բարձր մակարդակի վրա գտնվող իրավաքաղաքական համակարգը, որը պետք է ձևավորվի ու իրականացվի միջազգային և տարածաշրջանային անվտանգային ու ռազմաքաղաքական իրողություններին հաշվառմամբ: Ազգային անվտանգության իրավաքաղաքական հենքի հիման վրա կառուցվում է երկրի անվտանգության քաղաքականությունը, որն էլ պայմանավորում է պետության զարգացման տեսլականը:

9. Յուրաքանչյուր երկրի անկախության, ինքնիշխանության ու տարածքային ամբողջականության, ինչպես նաև մարդու իրավունքների, ազատությունների, հասարակական կարևոր այլ ըմբռնումների (հարաբերությունների) պահպանման համար պետությունն իրականացնում է ազգային անվտանգության երաշխավորմանն ուղղված գործառնություն՝ բնականաբար նկատի առնելով ինչպես իր, այնպես էլ հասարակության շահերը: ՀՀ անվտանգության ապահովման կառուցակարգը մշտապես և հետևողական կատարելագործվում է՝ հիմքում ունենալով պետական կառուցակարգերի առանձնացված կարգավիճակի հաստատումն ու պահպանումը: Որպես այդ զարգացումների փուլային տարանջատումներ կարելի է առանձնացնել մինչև 1995 թվականի պետական համակարգի կայացման, 1995 - 2005 թթ. վերափոխումների, 2005 – 2015 (2018) թթ. հայեցակարգային փոփոխությունների և 2018 թ-ից մինչ օրս կառավարման ամբողջապես նոր կառուցակարգերի առկայությունները:

10. Ազգային անվտանգության ապահովման շահերը պահանջում են անվտանգային ռազմավարության, քաղաքականության և տնտեսության միջև փոխհարաբերակցության նոր մոտեցումներ: Մարդկության զարգացման

գործընթացում տնտեսության և քաղաքականության վրա անվտանգային ռազմավարության ազդեցությունը մշտապես է և օբյեկտիվորեն լրացվում է հակադարձ կապերով: Այդ կապերը ի հայտ են գալիս պետական կառավարման համակարգի և անվտանգային քաղաքականության, տնտեսության և ռազմական գործունեության այլ տեսակների շրջանակներում որոշումների հիմնավորվածության գործուն համակարգի ձևավորման մեջ: Ընդ որում, համապետական մակարդակով ընդունված որոշումներն ինչքան շատ կհամապատասխանեն օբյեկտիվ իրականությանն ու միտումներին, որտեղ անվտանգության քաղաքականության զարգացման օրինաչափությունները դրսևորում են իրենց էությունը, այնքան հստակ այդպիսի որոշումները կհամապատասխանեն ամբողջ հասարակության իրական առաջընթացին, ինչպես նաև ամբողջապես և արդյունավետ կկիրառվեն անվտանգության համակարգի բոլոր հնարավորությունները: Դրանք, իրենց հերթին, կհանգեցնեն պետության ազգային անվտանգության ինստիտուտների առավել արդյունավետ փոխգործակցությանը քաղաքականության, տնտեսության և հասարակական այլ գործունեության ուղղությունների հետ:

11. Հայաստանի Հանրապետությունում անցած տարիների ընթացքում ընդունվել են տարբեր անվտանգային փաստաթղթեր, որոնք, նպատակաուղղված լինելով անվտանգության ապահովմանը, կատարողականության առումով փաստացի չեն ապահովել դրանցով նախանշված խնդիրների համընդգրկուն կարգավորումը: Այդպիսի անվտանգային փաստաթղթերի շարքում առաջին հերթին առանձնանում է ազգային անվտանգության ռազմավարությունը: Այս համատեքստում ազգային անվտանգության ռազմավարության մշակման կարևոր հարցերից է կոնկրետ մեթոդաբանության ընտրությունը: Որպես հիմնական ուղղություններ՝ առանձնացվում են հետևյալ երկու եղանակները. ազգային անվտանգության համակարգային կայացում ու դրա հիման վրա ոլորտային ռազմավարությունների ստեղծում և առանձին ոլորտային ռազմավարությունների մշակում ու դրանց համընդհանրացմամբ մեկ ամբողջական փաստաթղթի ստեղծում: Հայաստանի Հանրապետությունում մինչ օրս փաստացի կիրառվել է առաջին եղանակը:

12. Արտաքին անվտանգային քաղաքականության համատեքստում հարկ է ընդգծել, որ Մերձավոր Արևելքում անկայունության մեծացումը, Թրամփի կառավարման շրջանում Իրան-ԱՄՆ հարաբերությունների լարվածության աճը, Ուկրաինական ճգնաժամի համապարփակ հանգուցալուծման հեռանկարների բացակայությունը, ՌԴ-ի գլոբալ և տարածաշրջանային դերակատարության պահպանման անորոշությունները, Չինաստանի և Հնդկաստանի կողմից տարածաշրջանում էական աշխարհաքաղաքական ներգրավվածության ձգտելու հեռանկարների բացակայությունը, Թուրքիայի կողմից հարավկովկասյան տարածաշրջանում ադրբեջանական օրակարգերով առաջնորդվելը, Վրաստանի ներքաղաքական ճգնաժամի սրումը էական ազդեցություն են թողնում Հարավային Կովկասի անվտանգային միջավայրի ապակայունացման գործընթացում: Այդ գործոնները կարող են նպաստել հարավկովկասյան տարածաշրջանի՝ գլոբալ

ուժային կենտրոնների բախման նոր հարթակ դառնալու գործընթացներին, որը լուրջ սպառնալիքներ կարող է ստեղծել Հայաստանի Հանրապետության անվտանգության պահպանման համար:

13. Առաջիկա տարիներին Հայաստանի Հանրապետության անվտանգային գլխավոր սպառնալիքներից են տարածաշրջանային և արտատարածաշրջանային ուժային կենտրոնների միջև ռազմաքաղաքական մրցակցության նոր «օբյեկտ» դառնալու վտանգները: Մերձավոր Արևելքում և Արևելյան Եվրոպայում շարունակվող քաղաքական ճգնաժամերը, Իրան - Իսրայել ռազմավարական առճակատումը, Ռուսաստանի և Թուրքիայի տարածաշրջանային մրցակցության սրման հեռանկարները ՀՀ-ի համար ռազմաքաղաքական մրցակցության նոր «օբյեկտ» դառնալու անվտանգային ռիսկեր են ստեղծում: Բացի այդ՝ Ադրբեջանը ձգտում է ՀՀ-ին մեկուսացնելով կամ վերջինիս վերահսկողությունից դուրս արտատարածքային «միջանցք» ստանալով՝ դառնալ արևելքի և արևմուտքի, հյուսիսի և հարավի միջև տրանսպորտային «հաբ»: Ադրբեջանը հակված չէ ՀՀ սուվերեն հսկողությամբ նոր կոմունիկացիաներ անցկացնելու, որը և՛ կնպաստի ՀՀ տնտեսական զարգացմանը, և՛ ՀՀ-ին նոր վերահսկողական մեխանիզմներ կտրամադրի:

14. Հայաստանի Հանրապետությունը զգալի առաջընթաց է գրանցել երկրի ազգային անվտանգության քաղաքականության և ապահովման համակարգի կայացման ուղղությամբ՝ ստեղծելով անհրաժեշտ քաղաքական-իրավական նախադրյալներ ու վերահսկողական կառուցակարգեր՝ անվտանգության պետական մարմինների գործունեության արդյունավետության և պետության համար ռազմավարական նշանակության ոլորտներում տեղի ունեցող գործընթացների գնահատման, վերանայման և հետագա զարգացման նկատմամբ: Հարկ է նկատել, որ այս գործընթացներում ամենագլխավոր խնդիրը անվտանգային քաղաքականության համակարգման մակարդակին է վերաբերում, ինչը որոշակիորեն նաև տարանջատվեց թե՛ գործառութային, թե՛ սուբյեկտային ասպեկտներով հատկապես Հայաստանի Հանրապետությունում խորհրդարանական կառավարման մոդելին անցնելու, հետագա պաշտպանական-անվտանգային զարգացումների, պատերազմական ակտիվ գործընթացների պայմաններում:

15. Վերգերատեսչական պետական մարմինները երկրների ներքին և արտաքին ռազմավարական հնարավոր վտանգի ու սպառնալիքների հիմնական ուղղությունները մշակող և տվյալ ոլորտում տարբեր պետական մարմինների գործունեությունները համակարգող կառույցներն են, որոնք ձևավորվել և գործում են արտասահմանյան գրեթե բոլոր երկրներում: Ատենախոսության մեջ ուսումնասիրվել են նմանատիպ մարմինների կարգավիճակներն ու իրավասության շրջանակները ԱՄՆ-ում, Ռուսաստանի Դաշնությունում, Իրանում, Լեհաստանում, Իսրայելում, Վրաստանում՝ որպես ՀՀ-ում անվտանգության խորհրդի գործառնության նոր պայմանների բարելավման փորձի հնարավորություններ:

Ներկայացված օրինակները ցույց են տալիս, որ թեև տարբեր երկրներում ազգային անվտանգության քաղաքականությանը վերաբերող օրենսդրություններում առկա են ընդհանուր նպատակներ, միևնույն ժամանակ դրանցից յուրաքանչյուրն առանձնանում է իր քաղաքական-իրավական բնորոշումներով, կազմավորման ու ենթակայության, կառուցվածքային և գործառութային առանձնահատկություններով: Անվտանգության համակարգող մարմինների պրակտիկայի ուսումնասիրությունը արժեքավոր փորձ է ստեղծում Հայաստանի Հանրապետության անվտանգության քաղաքականության լիարժեք կայացման ու գործնականում դրա կիրառելիության ապահովման կառուցակարգերի հետևողական զարգացման համար:

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

1. Ազգային անվտանգության ապահովումը, որն արդեն ժամանակակից ներքին ու արտաքին քաղաքականության կարևոր բաղադրիչներից է, ձեռք է բերվում կիրառական տարբեր միջոցներով: Առաջարկվում է փափուկ ու կոշտ ուժ կատեգորիաների հաշվառմամբ առանձնանել քաղաքականության երկու հակառակ մոտեցումներ՝ փափուկ անվտանգության քաղաքականություն և կոշտ անվտանգության քաղաքականություն: Այս մոտեցումները կարևոր դեր ունեն որոշելու, թե ինչպես են պետությունները արձագանքում սպառնալիքներին և ինչպիսի հարաբերություններ են ձևավորում այլ երկրների հետ:

Ներպետական հայեցակարգային մակարդակում անվտանգության քաղաքականության կոշտ տարբերակին հարող երկրներում անվտանգության համակարգի ձևավորման ու գործունեության, ինչպես արժեքաբանական հիմնահարցերը ունեն նորմատիվ-իրավական ամրագրումներ, հետևաբար՝ քաղաքական իշխանության անելիքը կոնկրետանում է դրանց ապահովման և իրագործման շրջանակներում: Փափուկ քաղաքականության որդեգրման դեպքում երկրում հաստատվում են անվտանգության հայեցակարգային հիմքեր՝ հիմնականում ռազմավարությունների, դոկտրինների տեսքով, առանց հիմքային նորմատիվային փաստաթղթավորման, իսկ քաղաքականության իրագործման նպատակայնությունը և ամբողջ գործիքարանը որոշվում է քաղաքական ղեկավարության ու լիդերների կողմից, որոնք էլ այդպիսով ստանձնում եմ անվտանգության ապահովման համար «անձնավորված» պատասխանատվություն:

2. Որպես ՀՀ արդի ազգային շահերի ձևավորման և ռազմավարական մակարդակում պարտադիր ամրագրման հանգուցային հիմնական գնահատումներ՝ առաջարկվում են հետևյալները. *ՀՀ անկախության, ինքնիշխանության և տարածքային ամբողջականության երաշխավորումը, ՀՀ քաղաքացիների հավաքական արժեհամակարգային ինքնության, անվտանգության և բարեկեցության ապահովումը, տնտեսական անվտանգության և կայուն զարգացման խթանումը, տարածաշրջանային կայունության, խաղաղության և միջազգային փոխգործակցության ամրապնդումը, ռազմավարական գործընկերության և պաշտպանական քաղաքականության զարգացումը:*

3. Ռազմավարական մակարդակում ազգային շահերի գնահատման գործընթացում հատուկ ուշադրության են արժանի նաև շահերի հստակ ու ճշգրիտ որոշման արդյունքում ակնկալվող անվտանգային քաղաքականության հետևյալ առանցքային նպատակները. *անվտանգային կարողությունների շարունակական և համակողմանի ամրապնդումն ու զարգացումը, պաշտպանունակության և զսպման կարողությունների բարձրացումը, ազգային համապարփակ պաշտպանության համակարգի ձևավորումը, ՀՀ ազգային անվտանգության սպառնալիքների կանխարգելումն ու չեզոքացումը, հիբրիդային և ասիմետրիկ սպառնալիքներին դիմակայելու կարողությունների զարգացումը, տնտեսական անվտանգության կառուցակարգերի և ռազմարդյունաբերական ներուժի կատարելագործումը, բազմակողմ և երկկողմ հավասարակշռված արտաքին անվտանգային համագործակցության զարգացումը, ռազմաքաղաքական համագործակցության և տարածաշրջանային ինտեգրման խորացումը:*

4. Ազգային անվտանգության քաղաքականության համատեքստում կարևորվում է նաև ռազմավարական մակարդակի փաստաթղթերի աստիճանակարգության երաշխավորումը. ազգային անվտանգության ռազմավարություն – ոլորտային ռազմավարություններ (օրինակ՝ ազգային պաշտպանության ռազմավարություն) – ոլորտային ծրագրային հայեցակարգեր (օրինակ՝ ռազմական դոկտրին կամ պաշտպանական համակարգի/զինված ուժերի զարգացման ծրագիր) – առանձին ենթաոլորտային ուղղություններ ծրագրային փաստաթղթեր (օրինակ՝ ռազմական արդյունաբերության զարգացման տեսլական, ռազմագիտակրթական համակարգի զարգացման տեսլական և այլն):

Այս շղթայում ընդգծված կարևորություն և նորարարություն ունի ոլորտային ռազմավարական ամրագրման մակարդակը: Մասնավորապես, պաշտպանական-անվտանգային ուղղության մեջ ազգային պաշտպանության ռազմավարությունը. նպատակը կարող է հանդիսանալ՝ ձևավորել հստակ և իրատեսական մոտեցում պետության պաշտպանական կարողությունների ձևավորման, սպառնալիքներին համարժեք արձագանքման և տարածաշրջանում կայուն զարգացման ուղղությամբ:

5. Սոցիալական ցանցերի աննախադեպ աճը և ապատեղեկատվության արագ տարածումը, որտեղ տեղեկատվական պատերազմը գործիքակազմի կենսական մաս է. փոխել են հիբրիդային գործողությունների առանց այն էլ բարդ բնույթը: Տեղեկատվական պատերազմը և ապատեղեկատվական արշավները նախատեսված են հավաքական վնաս հասցնելու, սոցիալական համախմբվածությունը խաթարելու և ներքին քաղաքականությունն ապակայունացնելու համար: Որպես հիբրիդային պայքարի ձև՝ ապատեղեկատվական արշավները պատերազմի այնպիսի հնարքներ են, որոնք թիրախավորում են նոր ժողովրդավարություններին կամ հետպատերազմյան հասարակություններին:

ՀՀ-ում որպես տեղեկատվական քաղաքականության և հակապայքարի օրակարգային զարգացումներ կարելի է նախանշել տեղեկատվական

անվտանգության և կիբեռանվտանգության կարողությունների ձևավորման ամբողջացումը և շարունակական զարգացումը՝ ոլորտը կարգավորող օրենսդրության վերանայմամբ, հնարավոր հակառակորդի հետախուզական, տեղեկատվական և քարոզչական գործունեության հակազդեցության մեխանիզմների կատարելագործումը, միասնական տեղեկատվական քաղաքականության և տեղեկատվական գործողությունների արդյունավետության բարձրացումը, տեխնիկական արդի լուծումներով հագեցված համալիր և բազմաշերտ կիբեռանվտանգության համակարգի զարգացումը և այլն:

6. ՀՀ դեմ ուղղված բազմատիրույթային սպառնալիքներին հակազդելու համար պաշտպանության և անվտանգության համապարփակ մոդելի կիրառում, այն է՝ ռազմավարական զսպման համակարգի և կանխարգելիչ պատերազմի նախաձեռնության համաձուլվածքով՝ ռազմական և ոչ ռազմական միջոցների և հնարավորությունների, ձևերի ու եղանակների համալիր կիրառություն, հիբրիդային սպառնալիքներին, հիբրիդային պատերազմների բազմաոլորտ գործիքակազմին արդյունավետ հակազդելու համար նպատակաուղղված պետական քաղաքականության մշակում և վարում, պետության ազգային շահերի իրացմանը և ազգային անվտանգության ապահովմանը միտված տեղեկատվական և կիբեռանվտանգության ոլորտում գործուն ու ոչ ժամանակավրեպ քաղաքակա-նության մշակում և դրա իրականացման համար հաստատուն հիմքերի ստեղծում և այլն:

7. Ազգային անվտանգության քաղաքականության արտաքին ուղղությամբ կարևորվում է գործընկեր երկրների հետ ռազմավարական հարաբերությունների խորացումը հատկապես պաշտպանական-անվտանգային և ռազմական՝ ռազմավարական բնագավառներում, այդ թվում՝ ռազմաարդյունաբերական համալիրի և արհեստական բանականության՝ ԶՈՒ-ում ներդրման ուղղություններով, ՌԴ-ի հետ ռազմական՝ ռազմավարական համագործակցությանը միտված նոր և հստակեցված պայմանագրի կնքում, ռազմական կրթության և ռազմատեխնիկական համագործակցության ուղղություններով ՆԱՏՕ-ի և դաշինքին անդամակցող առանձին պետությունների (մասնավորապես՝ ԱՄՆ, Ֆրանսիա, Հունաստան) հետ գործընկերության խորացում՝ արևմտյան առաջավոր փորձի ներդրման և տեղայնացման նպատակով, Վրաստանի և Իրանի հետ խաղաղ և պատերազմական ժամանակաշրջաններում՝ ՀՀ ռազմատեխնիկական սպառազինության և միջոցների անխոչընդոտ ներկրման թույլտվության միջպետական պայմանավորվածությունների ձեռքբերում և ամրագրում, Չինաստանի հետ ռազմագիտական և ռազմակրթական բնագավառում համագործակցության խորացում, Հնդկաստանի հետ ռազմատեխնիկական համագործակցության խորացում և այլն:

8. Ինտեգրված անվտանգության համակարգ ստեղծելու և միջգերատեսչական արդյունավետ համակարգում ապահովելու միջոցառումներ, այդ թվում՝

ա. Անվտանգության խորհրդի՝ որպես անվտանգային, պաշտպանական և արտաքին քաղաքական ոլորտում համակարգող հաստատության դերի բարձրացում.

բ. անվտանգային համակարգում Անվտանգության խորհրդի դերի, վերջինիս և անվտանգային ոլորտի այլ մարմինների փոխգործակցության և ընդհանուր առմամբ անվտանգային ոլորտում բազմագերատեսչական փոխգործակցության իրավական և նորմատիվ հետագա կարգավորում.

գ. Անվտանգության խորհրդի գրասենյակի անձնակազմի կարողությունների զարգացում՝ ռիսկերը գնահատելու և անվտանգության տարբեր մարմինների կողմից բազմաոլորտ արձագանք նախաձեռնելու համար.

դ. Անվտանգության խորհրդի գրասենյակին կից կազմավորել ազգային անվտանգության բազմամակարդակ ու բազմավեկտոր հիմնախնդիրների գիտավերլուծական գնահատումներով զբաղվող գիտահետազոտական կենտրոն (ինստիտուտ)՝ նմանատիպ կառույցների մասին արտասահմանյան փորձի հաշվառմամբ:

Ատենախոսության հիմնական դրույթները և նորույթ պարունակող եզրակացություններն արտացոլվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում՝

1. Բագրատյան Բ., "The State as the Key Actor in National Security Policy" // «Կաճառ» գիտական պարբերական, Երևան, 2023, № 1, էջ 140-145:

2. Բագրատյան Բ., "Development of Legal and Political Conceptual Framework for National Security of the Republic of Armenia" // «Կաճառ» գիտական պարբերական, Երևան, 2024, № 2, էջ 160-169:

3. Բագրատյան Բ., "The Status of the Security Council in Ensuring National Security (Comparative Analysis)" // Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 2025, № 2, էջ 134-147:

4. Բագրատյան Բ., Ազգային անվտանգության ինստիտուտի տեսական և հայեցակարգային մոտեցումները ՀՀ ազգային անվտանգության համակարգի զարգացման դիտանկյունից // «Բանբեր Եվրասիա միջազգային համալսարանի», Երևան, 2025, № 1, էջ 77-90:

5. Բագրատյան Բ., "The Fundamental Issues of Documenting the National Security Strategy of the Republic of Armenia" // «Կաճառ/Ակադեմիա» հասարակագիտական պարբերական, Երևան, 2025, № 1, էջ 147-155:

6. Բագրատյան Բ., "The Main Advantages and Disadvantages of Soft and Hard Security Policies" // "WISDOM", Yerevan, 2025, № 1(31), էջ 56-65:

7. Բագրատյան Բ., "The Conceptual Assessment and Documentation of Security Interests" // «Կաճառ/Ակադեմիա» հասարակագիտական պարբերական, Երևան, 2025, № 2, էջ 190-200:

8. Bagratyan B., Hakobyan N., Sotnyk I., Chortok Y., Khachatryan A., "Business Ethics in National Security Strategy on Employment and Subjective Well-Being" // Business Ethics and Leadership, 2025, Volume 9, Issue 3, Indexed in Scopus, p. 41-55.

БАГРАТЯН БАГРАТ СЕРГЕЕВИЧ

КОНЦЕПТУАЛЬНОЕ ОБЕСПЕЧЕНИЕ ПОЛИТИКИ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ: ПРОБЛЕМЫ И ВОЗМОЖНОСТИ РАЗВИТИЯ

Диссертация на соискание научной степени кандидата политических наук по специальности 23.00.02 “Политические институты и процессы”. Защита диссертации состоится 19.02.2026 г. в 14:00 часов на действующем в ЕГУ специализированном совете 056 "Политология и международные отношения" МОНКС КВОН РА
(адрес: РА, г. Ереван, 0025, Алека Манукяна, 1).

РЕЗЮМЕ

Целью диссертации является исследование институциональной природы национальной безопасности Республики Армения, выявление особенностей разработки и реализации политики безопасности, подходов к выяснению и оценке национальных интересов, их стратегическому обеспечению, а также многомерности политики внешней безопасности Республики Армения в глобальной геополитической и международной сферах безопасности в регионе Южного Кавказа и за его пределами.

Эффективность разработки политики безопасности Республики Армения, её возможностей и нейтрализации угроз обусловлена эффективностью их прогнозирования, своевременного выявления и классификации. Эффективность использования сил, средств и ресурсов, необходимых для обеспечения национальной безопасности, также зависит от адекватной оценки внешних рисков и угроз безопасности. Выявление и эффективная нейтрализация подобных потенциальных угроз безопасности возможны исключительно с учётом вышеуказанных и многочисленных других оценок глобальной и региональной среды безопасности.

В качестве основной цели модернизации политики безопасности можно определить основные направления, задачи долгосрочного планирования и ресурсы, которые послужат основой для структурного и содержательного преобразования и использования сектора национальной безопасности Республики Армения и, в частности, возможностей страны, развития систем управления, эффективного использования научно-технического потенциала и, вместе с тем, для обеспечения сильной и надежной системы и политики безопасности.

В контексте оценки профессиональных источников следует отметить, что разные специалисты используют различные определения для характеристики института национальной безопасности. Все эти определения имеют политическую, философскую, политико-экономическую и правовую природу. Проблема

заключается в том, что проблема безопасности одновременно является важнейшей теоретической проблемой и напрямую связана с политической жизнью страны, государственным управлением и повседневной деятельностью, представляя собой сложное и многоуровневое явление.

Работа состоит из введения, трёх глав, заключения и списка литературы. Во введении обосновывается актуальность темы, научная степень проблемы, определяются цель и задачи, научная новизна исследования, теоретическая и практическая значимость работы.

В первой главе диссертации, озаглавленной **«Теоретико-методологические вопросы политики национальной безопасности и её реализации»**, автор всесторонне исследовал особенности институционального определения и оценки национальной безопасности, а также проявления элементов «мягкой» и «жёсткой» политики в реформах обороны и безопасности РА. В данной главе посредством комплексного анализа рассматриваются национальные интересы в контексте политики национальной безопасности Республики Армения.

Во второй главе диссертации под названием **«Основные гарантии политики национальной безопасности Республики Армения»** анализируется концептуальное положение политики национальной безопасности Республики Армения на период 1991–2024 гг., оцениваются актуальные проблемы документирования стратегии национальной безопасности Республики Армения. Отдельная глава посвящена стратегическому видению политики внешней безопасности Республики Армения.

В третьей главе под названием **«Внутренняя система стратегического обеспечения политики национальной безопасности»**, используя научно-аналитический подход, автором рассматриваются комплексность и эффективность внутренних структур политики национальной безопасности на примере РА, а также исследуется и оценивается роль Совета Безопасности в обеспечении национальной безопасности, проводя также сравнительный анализ правового и политического статусов этих институтов в ряде зарубежных стран.

BAGRATYAN BAGRAT SERGEY

CONCEPTUAL PROVISION OF THE NATIONAL SECURITY POLICY OF THE REPUBLIC OF ARMENIA: PROBLEMS AND OPPORTUNITIES FOR DEVELOPMENT

Dissertation under 23.00.02 “Political Institutions and Processes,” aspiring to earn Ph.D. in Political Sciences. The defense of the dissertation will take place on 19.02.2026, at 14:00 at the Specialized Council 056 "Political Sciences and International Relations” of the RA MoESCS HESC, operating at Yerevan State University (Address: RA, Yerevan, 0025, 1 Alex Manoogian).

SUMMARY

The goal of the dissertation is to study the institutional nature of the national security of the Republic of Armenia, to identify the peculiarities of the development and implementation of security policy, the approaches to clarifying and appreciating national interests, their strategic guarantee, as well as the multidimensionality of the foreign security policy of the Republic of Armenia in the global geopolitical and international security domains in the South Caucasus region and beyond.

The effectiveness of the development of the security policy and capabilities of the Republic of Armenia, and the neutralization of threats is conditioned by the effectiveness of their forecasts, timely identification and classification. The effective use of the forces, means and resources necessary to ensure national security also depends on the appropriate assessment of external security risks and threats. The identification and effective neutralization of such potential security threats is possible exclusively by taking into account the above-mentioned and numerous other assessments of the global and regional security environment.

As the main goal of security policy modernization, it is possible to define the main guidelines, long-term planning tasks and resources that will serve as the basis for the structural and substantive transformation and application of the national security sector of the Republic of Armenia and, in particular, the country's capabilities, the development of management systems, the effective use of scientific and technical potential, and, with all that, for ensuring a strong and reliable security system and policy.

In the context of evaluating professional sources, it is worth noting that different specialists use different definitions to characterize the institution of national security. All these definitions have political, philosophical, political-economic and legal natures. The problem is that the issue of security is simultaneously a major theoretical issue and is directly related to the political life of the country, state governance and daily operations, being a complex and multi-level phenomenon.

The work consists of introduction, three chapters, conclusions and list of references. In the introduction the urgency of the topic, presented a scientific degree of a

problem, is the objective and tasks, scientific novelty of the research, both theoretical and practical importance of the work.

In the first chapter of the dissertation, entitled **"Theoretical and Methodological Issues of National Security Policy and Its Implementation,"** the dissertation author comprehensively researched the features of the institutional definition and assessment of national security, as well as the manifestations of elements of soft and hard policies in the defense and security reforms of the Republic of Armenia. This chapter, through a comprehensive analysis, highlights national interests in the context of the national security policy of the Republic of Armenia.

In the second chapter of the dissertation, entitled **"The Basic Guarantee of National Security Policy in the Republic of Armenia"**, the author analyzes the conceptual provision of national security policy in the Republic of Armenia for the period 1991-2024, assesses the current issues of documenting the national security strategy of the Republic of Armenia. A separate subchapter refers to the strategic vision of the foreign security policy of the Republic of Armenia.

In the third chapter, entitled **"The Domestic System of Strategic Assurance of National Security Policy"**, the author, using a scientific-analytical approach, considers the comprehensiveness and effectiveness of domestic structures of national security policy using the example of the Republic of Armenia, as well as researches and evaluates the role of the Security Council in ensuring national security, also conducting a comparative analysis of the legal and political statuses of these institutions in a number of foreign countries.